ԼՐԱՏՈՒ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Հոկտեմբերի 11—12-ին ՀՍՍՀ ԳԱ Նիստերի դահլիճում տեղի ունեցավ հոբելյանական գիտական նստաշրջան՝ նվիրված հեղափոխական դեմոկրատ, հայ մեծ գրող ու մտածող Մ. Նալբանդյանի ծննդյան 150-ամյակին։

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ասաց, որ Մ. Նալբանդյանի գործունեությունը ծավալվեց անցյալ դարի 50—60-ական թվականներին, երբ 30-ամյա ռեակցիայից հետո Ռուսաստանում սկսվել էր հասարակական մտքի մեծ դարթոնք, խորանում ու ծավալվում էր հակացարական ու հակաճորտատիրական շարժումը։ Մասնակցելով այդ շարժմանը, Մ. Նալբանդյանը հայ հասարակական, դիտական միտքը բարձրացրեց ռուսական և արևմտաեվրոպական առաջավոր ըմբռնումների մակարդակին, մեծապես նպաստեց նրա զարգացմանը։ Մ. Նալբանդյանի մեծությունն այն է, որ նա ճիշտ կռահեց հայ ժողովրդի փրկության հեռանկարը, այն կապելով համառուսական և համաեվրոպական ազատագրական շարժման հետ։ Իր պրոպագանդած գաղափարներով,— ասաց Վ. Համբարձումյանը,— Մ. Նալբանդյանը դարձավ մարքսիզմի և սոցիալ-դեմոկրատիայի անմիջական նախորդը հայ իրականության մեջ։ Մեր ժողովրդի հետագա պատմական ճակատագիրը հաստատեց նրա մտքերի արդարացիությունը և իմաստությունը։

«Միքայել Նալբանդյանը առաջին հայ մարքսիստների գնահատմամբ» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը։ Նա նշեց, որ հայ իրականության մեջ Մ. Նալբանդյանն առաջինն էր, որ ռուս մեծ հեղափոխական դեմոկրատների ազդեցությամբ դարձավ խոշոր փիլիսոփա-մատերիալիստ, համառուսաստանյան հեղափոխական դեմոկրատիայի փայլուն ներկայացուցիչներից և 1860-ական թվականների հեղափոխական շարժման պարագլուխներից մեկը։ Նրան բարձր են գնահատել Ս. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ա. Մյասնիկյանը, Ա. Զուրաբյանը և ուրիշներ, որոնք հանձին Մ. Նալբանդյանի տեսնում էին Ռուսաստանի նորագույն հեղափոխական ավազանում մկրտված երիտասարդության նախորդին։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Տ. Ղանալանյանի զեկուցման թեման էր «Միքայել Նալբանդյանը և հայ ժողովրդական բանահյուսությունը»։ Զեկուցողն ասաց, որ Մ. Նալբանդյանի երկերում առկա են բազմաթիվ ուշագրավ դիտարկումներ, որոնք մեծ արժեք են ներկայացնում հայ բանագիտական մտքի անցած պատմական ուղու բնութագրման համար։ Լինելով մատերիալիստ-մտածող, նա բանահյուսության առաջացման հիմքը համարել է իրական կյանքը։

ՀՍՍՀ ԳԱ գլխավոր դիտական քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ա. Գալոյանը Մ. Նալբանդյանի աշխարհայացքի ինտերնացիոնալիզմի քննությանը նվիրված իր զեկուցման մեջ կանգ առավ ռուս հեղափոխական մարտիկների և Մ. Նալբանդյանի աշխարհայացքների ընդհանրության, ցարիզմի դեմ մղված պայքարի միասնական խնդիրների վրա։ Զեկուցողն ընդգծեց, որ Մ. Նալբանդյանն իր ժողովրդի տնտեսական և քաղաքական ազատագրումը տեսնում էր ռուս ժողովրդի և ռուսական կայսրությունում ապրող բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրման մեջ։

Պատմական գիտությունների դոկտոր Ե. Լ. Ռուդնիցկայան (Մոսկվա) հանդես եկավ «Մ. Նալբանդյանը հեղափոխական իրադրության տարիներին» զեկուցմամբ։ Մեծ գրող և հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանի անունը, ասաց նա, անբաժանելի է ռուսական հեղափոխական շարժման պատմությունից։ Նա իր հրապարակախոսական տաղանդն ու բանաստեղծական ներշնչանքն ամբողջովին նվիրեց հեղափոխության, դեմոկրատիայի գաղափարների պրոպագանդմանը, պաշտպանելով աշխատավոր հայ ժողովրդի շահերը։ Բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հ. Հակոբյանը, որը հանդես եկավ «Նալբանդյանը ժամանակակիցների ընկալմամբ» զեկուցումով, բերեց Մ. Նալբանդյանի ժամանակակիցների գրառումները նրա մասին, որոնք կարևոր լրացում են Մ. Նալբանդյանին արժեքավորելու տեսակետից։

Նստաշրջանում լսվեցին նաև մի շարք այլ զեկուցումներ. «Մ. Նալբանդյանը և հայ աղ-

գային-ազատագրական շարժումները» թեմայով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Մնացականյանը, որը կանդ առավ երեք հանգուցային հարցերի վրա։ 1. Մ. Նալբանդյանը ազգի մասին ընդհանրապես և հայ ազգի ասաջացման ու նրա բնորոշ գծերի մասին մասնավորապես։ 2. Մ. Նալբանդյանը հայ ազգի իրավազուրկ սոցիալ-քաղաքական իրավիճակի և իր ազատագրության համար նրա մղած պայքարի մասին, 3. Մ. Նալբանդյանը և արդիականությունը։

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Ն. Սարինյանը խոսեց Մ. Նալբանդյանի հրապարակախոսական արվեստի մասին։ Միջազգային ռեակցիայի դեմ Մ. Նալբանդյանի մղած պայքարի մասին զեկուցեց բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Հ. Հովնանը. իսկ տնտեսագիտական գիտությունների դոկտոր Ն. Ռ. Թովմասյանը անդրադարձավ մեծ հեղափոխական դեմոկրատի տնտեսագիտական հայացքներին։ Պատմական գիտությունների դոկտոր Վ. Բ. Բարխուդարյանն անդրադարձավ Մ. Նալբանդյանի գործունեության առաջին շրջանին։ Բերելով բազմաթիվ փաստեր, նա եզրակացրեց, որ 1840-ական թվականների Նոր Նախիջևանի սոցիալական միջավայրը, մասնավորապես Հոդի համար գաղութի աշխատավորության և վերնախավի միջև մղված պայքարը, կարևոր դեր են խաղացել Մ. Նալբանդյանի հայացքների ձևավորման գործում։ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Մ. Ջրբաշյանը խոսեց Մ. Նալբանդյանի արձակի դեղարվեստական համակարգի մասին։

Գիտական սեսիայում Մ. Նալբանդյանի կյանքի ու գործունեության տարբեր հարցերի մասին զեկուցումներով հանդես եկան նաև պատմական գիտությունների դոկտորներ Վ. Ա. Պարսամյանը, Խ. Հ. Բարսեղյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ Ն. Հ. Մուրադյանը, Մ. Թ. Ավդալբեգյանը, Ս. Կ. Գարոնյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Ռ. Պ. Նահումյանը, Մ. Հ. Մխիթարյանը, ինչպես նաև Ն. Մ. Թաղևոսյանը։

Հոբելյանական գիտական նստաշրջանի բացմանը ներկա էր ՀԿԿ կենտկոմի քարտուղար Կ. Լ. Դալլաքյանը։

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ